ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ՀԲԸՄ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆ-ՔԵՊԵՔ ԱՄԵՆՕՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՀԲԸՄ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԱՐՄԷՆ-ՔԷՊԷՔ ԱՄԵՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ՈՐ Ի ՄՈՆՐԷԱԼ, ԿԱՆԱԴԱ

Հոգու անսահման բերկրանքով Հայրական Մեր սէրը, ողջոյններն ու Հայրապետական օրհնութիւնն ենք յղում ՀԲԸՄ Ալեք Մանուկեան Արմէն-Քէպէք Վարժարանի հոգաբարձու վարչութեան, տեսչական եւ ուսուցչական կազմի անդամներիդ, բոլոր սաներիդ, որ այսօր ցնծութեամբ համախմբուել էք հանդիսաւորապէս փօնակատարելու աւանդաշատ Ձեր կրթօջախի հիմնադրման երեսնամեայ յոբելեանը:

Սիրելի զաւակներ մեր Մայր Եկեղեցւոյ, Վարժարանի պատասխանատուներ եւ մանկավարժներ.

Ազգային վարժարանները վսեմ կոչում ունեն հայրենեաց ոգով կրթելու մատաղ սերնդին, որ, հաւատարիմ ազգային դարաւոր արժէքներին ու սրբազան աւանդներին, երաշխաւորն է աշխարհասփիւռ հայոց վաղուայ լուսառատ օրուայ:

Դուք հայեցի դաստիարակութիւն տալով, սիրոյ ու բարութեան հունդերի սերմանումով կեանքի ճանապարհ էք առաջնորդում հայ մանուկներին՝ մանկավարժի շնորհակալ Ձեր ներդրումը բերելով ազգային մեր կեանքին, որ Կանադայի օրհնեալ հողի վրայ հայաշունչ աշխոյժով է լեցուն՝ առաջնորդութեամբ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի: Արդարեւ, կանադահայոց հայրենաբոյր կեանքում մեծ է աւանդը Վարժարանի՝ գլխաւորութեամբ ուսումնական լուսաւոր Ձեր հաստատութեան հիմնադիր, բազում երախտիքներով ծանրաբեռն Դոկտ. Արշաւիր Կէօնճեանի, վաստակաշատ տնօրէնուհի Տիկ. Վարդուհի Պալեանի, տեսչական եւ ուսուցչական ողջ կազմի:

Ձեր նուիրեալ ծառայութեան բարձր գնահատանքով «ի Մօրէն լուսոյ» համայն Հայոց Միածնաէջ Աթոռից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ ջերմագին շնորհաւորանքները: Մաղթում ենք Ձեզ՝ Վարժարանի տեսչութեան հոգա-

ծու անդամներիդ, վաստակեալ ուսուցիչ-ուսուցչուհիներիդ եւ սիրասուն ողջ աշակերտութեանդ, երկար ու քաջառողջ տարիների արեւշատ կեանք, գործոց լիագոյն յաջողութիւններ եւ անսպառ ճաշակումն նուիրումի երջանկութեան:

Թող Բարին Աստուած հովանաւոր Իր Աջով ամուր ու անսասան պահի հիմերը Ձեր Վարժարանի՝ ի պայծառութիւն մեր Եկեղեցւոյ եւ մեր հայրենեաց, ի լուսաւորումն մտաց մանկտեաց մերոց:

«Մէր իմ ընդ ամենեսին ձեզ ի Քրիստոս Յիսուս. ամէն»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 25-ն ապրիլի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին Հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 31